ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

<<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

21.02.2015թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2014-2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում:

   /զեկ. Մ.Ս.Աթոյան/

2. ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագրի 2011-2015թթ. իրականացման վերաբերյալ:

   /զեկ. Ս. Ա. Առաքելյան/

3. ԵՊՀ ԻՄ-ում <<Կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018թթ համալիր միջոցառումների>> ծրագիրի հաստատում:

   /զեկ. Ս. Ա. Առաքելյան/

4. ԵՊՀ ԻՄ –ի 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատումը:

   /զեկ. Ս.Ա. Առաքելյան/

5. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի հանձնաժողովի կազմի հաստատման մասին:

/զեկ. Ս. Ա. Առաքելյան/

6. Ընթացիկ հարցեր.

- ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ Վարդան Արամայիսի Ալեքսանյանին դոցենտի գիտական կոչման համար երաշխավորելու հարցը:
- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի ֆրանսերեն լեզվի դասախոսներ Ա.Մարդանյանի, Ա.Հովհաննիսյանի, Մ.Աղբալյանի <<Ֆրանսիայի և Հայաստանի երկրագիտություն>> ձեռնարկը հրատարակման երաշխավորելու հարցը:
- 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակում անվանական կրթաթոշակների չափը սահմանելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

***<u>Օրակարգի առաջին</u>*՝** ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2014-2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում հարցի կապակցությամբ լսեցին գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը: Նշվեց, որ գիտական խորհրդի հաստատմանն ներկայացված 2014-2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի ժամանակացույցի նախագիծը կազմված է հաշվի առնելով ԵՊՀ համապատասխան ժամանակացույցը, ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցը և ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների ժամանակացույցները:

Արտահայտվեցին – տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակցույցը, ըստ ներկայացված նախագծի:

Որոշեցին

Որոշում 8/1

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակցույցը, համաձայն հավելվածի:

Օրակարգի երկրորդ՝ ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագրի 2011-2015թթ. իրականացման վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: /Զեկույցը կցվում է ամբողջությամբ/:

Արտահայտվեցին – ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա. Վ. Ցուցուլյանը և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագրի 2011-2015թթ. իրականացման վերաբերյալ զեկույցին և առաջարկեցին 2011-2015թթ ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատել լավ:

Որոշեցին

Որոշում 8/2

ԵՊՀ ԻՄ-ի 2011-2015թթ ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատել լավ:

Օրակարգի երրորդ՝ ԵՊՀ ԻՄ-ի Կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018թթ համալիր միջոցառումների ծրագիրի հաստատումը հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա կարևորելով կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի համակարգված

մոտեցման անհրաժեշտությունը ներկայացրեց <<ԵՊՀ ԻՄ-ի Կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018թթ համալիր միջոցառումների ծրագիր>>-ի նախագիծը/Կցվում է/:

Արտահայտվեցին – ՈՒՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա. Վ. Ցուցուլյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ.Հ. Զուրաբյանը, իրավախորհրդատու Ա. Ս. Հովհաննիսյանը և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ներկայացվող նախագծին, կարևորեցին ներկայացվող ծրագի արդյունավետ իրականացումը, և առաջարկեցին հաստատել:

Որոշեցին

Որոշում 8/3

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի Կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018թթ. համալիր միջոցառումների ծրագիրը համաձայն հավելվածի:

Օրակարգի չորրորդ՝ ԵՊՀ ԻՄ –ի 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատումը հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ֆակուլտետների խորհուրդները մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերությունը, ուսանողական խորհուրդը քննարկել և գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված.

1) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի **Վանուհի Արամայիսի Վանեսյանին՝ «Մոնթե Մելքոնյան»** անվանական կրթաթոշակ՝ երկու կիսամյակ

անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

2) Կիրառական արվեստի ֆակուլտետի «Կիրառական արվեստ» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանող **Սուրեն Վարդանի Հովսեփյանին՝ «Վազգեն Սարգսյան»** անվանական կրթաթոշակ՝ երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

3) Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Լուիզա Ռաֆիկի Ալեքսանյանին «Շավարշ Մարգարյան»** անվանական կրթաթոշակ՝ հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

4) Տնտեսագիտության ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Վեներա Հենրիկի Ազիբեկյանին «Երկրապահ»** անվանական կրթաթոշակ՝ երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

5) Տնտեսագիտության ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Նինա Հրայրի Գանջալյանին՝ «Սահակ Զորափորեցի»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

6) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի **Ժաննա Կամոյի Ղալթախչյանին՝ «Շառլ**

Ազնավուր» անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

7) Կիրառական արվեստի ֆակուլտետի «Կիրառական արվեստ» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի **Նարինե Էդիկի Դարբինյանին «Սպարտակ Սարգսյան»** անվանական կրթաթոշակ՝ երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

Արտահայտվեցին – տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Մ. Ա. Զաքարյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Ա. Շ. Մարգարյանը:

Որոշեցին

Որոշում 8/4

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի Վանուհի Արամայիսի Վանեսյանին 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակ:

Որոշում 8/5

Կիրառական արվեստի ֆակուլտետի «Կիրառական արվեստ» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանող Սուրեն Վարդանի Հովսեփյանին 2014–2015 ուսումնական տարվա երկրորդ

կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակ:

Որոշում 8/6

Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի Լուիզա Ռաֆիկի Ալեքսանյանին 2014–2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակ:

Որոշում 8/7

Տնտեսագիտության ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի Վեներա Հենրիկի Ազիբեկյանին 2014 – 2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել «Երկրապահ» անվանական կրթաթոշակ:

Որոշում 8/8

Տնտեսագիտության ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի Նինա Հրայրի Գանջալյանին 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակ:

Որոշում 8/9

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի Ժաննա Կամոյի Ղալթախչյանին 2014–2015 ուսումնական

տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակ:

Որոշում 8/10

Կիրառական արվեստի ֆակուլտետի «Կիրառական արվեստ» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի Նարինե Էդիկի Դարբինյանին 2014–2015 ուսումնական տարվա երկրորդ. կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել «Սպարտակ Սարգսյան» անվանական կրթաթոշակ:

Օրակարգի հինգերորդ՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի հանձնաժողովի կազմի հաստատման մասին վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա կարևորեց ուսման արդյունավետ կազմակերպման գործում ԵՊՀ ԻՄ –ին կից որակի հանձնաժողովի գործունեությունը և ներկայացրեց հանձնաժողովի կազմը՝

Արտահայտվեցին – ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա. Վ. Ցուցուլյանը և այլոք: Ելույթ ունեցողները առաջարկեցին կազմաը հաստատել առանց փոփոխության:

Որոշեցին

Որոշում 8/11

Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի կազմը համաձայն հավելվածի:

Ընթացիկ հարցեր

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի

Ալեքսանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ - ի գիտխորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը 2015թ. հունվարի 24-ի նիստում քննարկել է հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով, որ հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, նրան երաշխավորել է դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Ալեքսանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Ալեքսանյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1999թ., որից հետո նա հրատարակել է 4(չորս) գիտական հոդված և 2(երկու) ուսումնամեթոդական աշխատանք: Նա աշխատում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տասնչորս տարի՝ 2001թ.-ից սկսած, անընդմեջ, իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Նա մեծ կազմակերպական աշխատանք է տանում որպես կրթության ոլորտի ղեկավար: Վ. Ա. Ալեքսանյանի գիտամանկավարժական բարձր որակի

և հմտության անառարկելի վկայություններից մեկն էլ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ անցկացված ուսանողական հարցումներն են, որի բոլոր տարիների միջինը կազմում է 4,9 բալ:

Արտահայտվեցին - բ.գ.թ., դոց. Խ. Վարդանյանը, մ.գ.թ., դոց. Վ. Բրուտյանը, բ.գ.թ., դոց. Վ. Ավագյանը, պ.գ.դ., պրոֆ. Ռ. Նահապետյանը:

Արտահայտվողները ևս շեշտը դնելով Վ. Ալեքսանյանի ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում արդյունավետ գիտամանկավարժական գործունեության վրա, առաջարկեցին դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորել և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Որոշեցին

Որոշում 8/13

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին երաշխավորել դոցենտի գիտական աստիճան ստանալու համար,
2. միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

Լսեցին – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի ֆրանսերեն լեզվի դասախոսներ Ա.Մարդանյանի, Ա.Հովհաննիսյանի, Մ.Աղբալյանի <<Ֆրանսիայի և Հայաստանի երկրագիտություն>> ձեռնարկը հրատարակման երաշխավորելու հարցը:

Մ. Աթոյանը նշեց, որ <<Օտար լեզուների>> ամբիոնի նիստով որոշում է կայացվել դիմել ԵՊՀ Իմ գիտական խորհրդին օտար լեզուների ամբիոնի դասախոսներ Ա.Մարդանյանի, Ա.Հովհաննիսյանի, Մ.Աղբալյանի <<Ֆրանսիայի և Հայաստանի երկրագիտություն>> ձեռնարկը հրատարակման երաշխավորելու

վերաբերյալ: Ձեռնարկը գրված է ֆրանսերեն լեզվով, գրախոսվել է բ.գ.թ. Զ.Ս.Առաքելյանի կողմից և արժանացել հավանության:

Արտահայտվեցին – Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, օտար լեզուների ամբիոնի վարիչ Ք. Հարությունյանը.

Նշվեց, որ մտածողության ու աշխարհայացքի ընդլայնման առումով ձեռնարկը կարող է օգտակար լինել ֆրանսերեն լեզուն ինքնուրույն ուսումնասիրողների համար: Այն արժեքավոր է հատկապես նրանով, որ առաջին փորձն է ներկայացնել Հայաստանը՝ <<Երկրագրության հիմունքներ /ֆրանսերեն լեզու/>> առարկան ուսումնասիրողների համար:

Որոշեցին

Որոշում 8/14

Երաշխավորել հրատարակման Ա. Մարդանյանի, Ա. Հովհաննիսյանի, Մ. Աղբալյանի <<Ֆրանսիայի և Հայաստանի երկրագիտություն>> ձեռնարկը:

Լսեցին - 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակում անվանական կրթաթոշակների չափը սահմանելու մասին:

Որոշեցին

Որոշում 8/15

Սահմանել 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակում անվանական կրթաթոշակների հետևյալ չափերը.

1. Վերջին 4 (չորս) և ավելի կիսամյակներում անընդմեջ գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողների համար սահմանել 20 000 (քսան հազար) դրամ,

2. Վերջին 3 (երեք) կիսամյակներում անընդմեջ գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողների համար սահմանել 15 000 (տասհինգ հազար) դրամ,
3. Վերջին 2 (երկու) կիսամյակներում անընդմեջ գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողների համար սահմանել 10 000 (տաս հազար) դրամ:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

21.02.2015թ.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի կազմը:

Հանձնաժողովի նախագահ - **Անուշավան Հայկարամի Մակարյան**, տնօրենի խորհրդական, ֆ.մ.գ.թ., դոցենտ,

տեղակալ - **Արտակ Վոլոդյայի Ցուցուլյան**, ՄԿՈԱ բաժնի վարիչ, ֆ. մ. գ, թ., դոցենտ,

քարտուղար - **Նաթելլա Սերոժի Գրիգորյան**, տնօրենի օգնական,

անդամներ - **Ալեքսան Շամիլի Մարգարյան**, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ժ/պ, արհբյուրոյի նախագահ

- **Մուշեղ Լևոնի Սարուխանյան**, հեռակա ուսուցման բաժնի վարիչի տեղակալ,

- **Գագիկ Շուրիկի Գյոզալյան**, ՈՒԳՊՎ-ի ավագ տեսուչ

- **Վաչիկ Արամայիսի Բրուտյան**, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ, մ.գ.թ., դոցենտ,

Վանուհի Արամայիսի Վանեսյան, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի,

- **Վահագն Վոլոդյայի Առաքելյան**, ՀՀ աշխատանքների և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական ծառայության գործակալության Իջևանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն

- **Կարեն Աշոտի Նազարյան**, ՀՀ Տավուշի մարզի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

- **Հովսեփ Իսրայելի Մովսեսյան**, ՀՀ ԱԱԾ Տավուշի մարզային վարչության պետի տեղակալ, գիտխորհրդի անդամ,

- **Լևոն Վոլոդյայի Մելիքջանյան**, «Արդշինինվեստբանկ»-ի կառավարիչ,

- **Գրիգոր Ցոլակի Նազինյան**, «Իջևանի առողջության առաջնային պահպանության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն

- **Արթուր Սպարտակի Հովակիմյան**, ՀՀ ՊՆ Իջևանի Զինվորական կոմիսար,
- **Արմեն Յուրիկի Խոջայան**, Իջևան քաղաքի ավագ դպրոցի տնօրեն: